կական լեռնաշխարհին։ Պատմագիր Ստեփաննոս Օրբելյանը՝ պարծենալով իր հայրենի Սիսական աշխարհով, որի մի մասն է կազմում այժմյան Զանգեզուրը, շեշտում է, որ միայն Կապանի (Բաղքի) սահմաններում կար 43 բերդ[23] և ամբողջ երկրում բազմաթիվ են «...ամուրք անառիկք ի սմա որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տէր մատնեսցէ»[24]։ Այս բերդերի մեծագույն մասը հենց սղնախներ պիտի լինեին՝ իրենց բնական դիրքով ապահով ապաստան ներկայացնող, որտեղ մարդու ձեռքի կառուցումների շատ քիչ կարիք կար։ Այժմ երբեմն ժողովուրդը պարզորեն անվանում է դրանցից շատերը բերդ՝ դժվար մատչելի ժայռ։ Կալա կամ ղալա են կոչվում այն պաշտպանական դիրքերը, որտեղ մարդու ձեռքով կառուցված ամրությունները քիչ թե շատ նշանավոր տեղ են գրավում։ Այդ արհեստական ամրությունները չեն գրավում հետաքրքրվողների ուշադրությունն իրենց բարձր կառուցողական արհեստով։ Մեծ մասամբ դրանք բնականից ամուր տեղեր են, որտեղ պատերով փակված են այն կողմերը, ուր ժայռը կարող է մատչելի դառնալ մագլցող թշնամու համար։ Մարդն իր հույսը դնում էր ժայռի գրեթե ուղղաձիգ կողերի անվերելանելիության վրա։ Ամեն մի քիչ թե շատ նշանավոր գյուղ ուներ վտանգի ժամանակ նահանջելու և պատսպարվելու այդպիսի սղնախ։ Մի այդպիսի անմատչելի, ուղղաձիգ կողեր ունեցող քարաժայռի վրա է գտնվում Հին Գորիս գյուղի Լաստ կոչվող խութը, ուր կարելի է բարձրանալ միայն մի կողմից, որտեղ և կառուցված են պաշտպանական պատեր։ Գրեթե նույն բնույթն ունի նաև Խնձորեսկ գյուղի կալան, որտեղ դավաճանությամբ սպանվեց Դավիթ Բեկի հավատարիմ զինակիցը և նրա հաջորդը՝ Մխիթար սպարապետը, որը թաղված է նույն գյուղի հին տաճարի պարիսպների մոտ, դամբարանը զարդարված է սպարապետի ձիավոր պատկերով։ Որոտան (Բազարչայ) գետի աջ ափին, հենց Մելիք Թանգու կառուցած կամուրջի գլխին, այնտեղ, որտեղով անցնում է ճանապարհը Տաթևից դեպի Սիսիանի գլխավոր գյուղերը— Բռնակոթ, Սիսավան՝ այժմյան Սիսիան, Անգեղակոթ, ցցված է մի սեպ ժայռ, որի վրա տեղ-տեղ երևում են պատերի հետքեր։ Դա հռչակավոր Որոտնա բերդն է, որը տեղացիք սխալմամբ կոչում են Դավիթ Բեկի բերդ։ Դա իշխում է այն կետին, որտեղով հնարավոր է անցնել գետի մեկ ափից մյուսը։ Ժայռի գլխին գտնված փոքր հրապարակը մատչելի է միայն գետի ափին հակառակ կողմից, թեև մեծ դժվարություններով. այդտեղ է, որ հարկ է եղել մուտքը կապել պատով[25]։ Մի նման լեզվակի վրա, որտեղ երկու խոր ձորեր իրար կտրում են, երևում են հին պարիսպների հետքեր նաև Բարձրավան (Մազրա) գյուղի հյուսիսային կողմում։ Նման ավերակ կառուցվածքներ, միայն հին վիճակի մասին ավելի գաղափար տվող՝ պահպանվել են Սիսիան գյուղի մոտ մի բլրի վրա։ Այստեղ ապառաժոտ գագաթը երեք կողմից զառիթափ հատվում է։ Միակ ճանապարհը արևելյան կողմից է։ Պարզ որոշվում են կրկնակի պարիսպները, ջրի ավազանը, ուր ջուրը փողրակներով հասցրած է եղել հյուսիսային լեռներից։ Դա սակայն ոչ միայն վտանգի ժամանակ ապաստանելու վայր է եղել, այլև մշտական բնակավայր, ինչպես կարելի է եզրակացնել տների պատերի մնացորդներից։ Նույնանման բերդերից երկուսի մնացորդները պահպանվել են և Շաղաթ գյուղի

[23] Օրբելեան Ստ., *անդ*, *գլ.* ԿԱ։
[24] Անդ., *գլ.* Գ։
[25] Լալայեան Ե., *Սիսիան*, *էջ* 53։